

ՀՕՄ-ի Մոնթրեալի «Սօւէ» Մասնաճիւղի Տարեկան Տօնավաճառ

Այս տարի կրկին, ՀՕՄ-ի Մոնթրեալի «Սօւէ» մասնաճիւղը յաջողեցաւ ձեռնարկել տարեկան աւանդական տօնավաճառին, Նոյեմբեր ամսուայ երկրորդ շաբաթավերջին, Հայ Կեդրոնի ՀՄՀՄ-Կամք «Հայկ Մարգարեան» մարզասրահէն ներս:

Բացման պաշտօնական արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 13 Նոյեմբերի առաւօտեան ՀՕՄ-ի քայլերգով: Ներկայ էին՝ Գերաշնորհ Սուրէն Արք. Գաթարոյեան, Արժանապատիւ Տէր Գառնիկ Ա. քահանայ Գոյունեան, ՀՕՄ-ի կեդրոնական վարչութեան մօտ Գանատայի շրջանի՝ ներկայացուցիչ՝ ընկի Արմինէ Կարապետեան, ՀՕՄ-ի Շրջ. վարչութեան ատենապետուհի՝ ընկի. Անի Օհանեան եւ վարչական ընկերուհիներ, Լաւալի «Շուշի» մասնաճիւղի ատենապետուհի ընկի. Ֆլօրա Կիրակոսեան եւ վարչական ընկերուհիներ, քոյր միութիւններու ներկայացուցիչներ եւ հիւրեր, որոնց կարգին Սէն Լորան ընտրաշրջանի դաշնակցային երեսփոխան տիկ. Մարուա Րըզքի եւ Բարք Էքսթանշըն ընտրաշրջանի քաղաքային խորհրդական ընկի. Մարի Տէրոս:

«Սօւէ» մասնաճիւղի ատենապետուհի՝ ընկի. Թամար Եաղճեան բացման իր խօսքով նախ բարի գալուստ մաղթեց ներկաներուն, ապա յատուկ շնորհակալութիւն յայտնեց տօնավաճառի եւ ընկերային յանձնախումբերու անդամուհիներուն՝ իրենց անձնուիրութեան, համագործակցութեան եւ համերաշխ աշխատանքին, ի նպաստ տօնավաճառի յաջողութեան, որ կը վայելենք միասնաբար: Շնորհակալութիւն յայտնեց նաեւ բոլոր նուիրատուներուն, օժանդակներուն եւ կամաւորներուն, որոնք կը քաջալերեն ՀՕՄ-ի ձեռնարկները: Ընկերուհի ղիտել տուաւ երիտասարդ ընկերուհիներու ներդրումը, որոնք փորձառու ընկերուհիներու կողքին աշխատեցան եւ սորվեցան անոնց փորձառութենէն այս հսկայ աշխատանքի ընթացքին:

Ապա, Գերաշնորհ Սուրէն Արք.Գաթարոյեան փոխանցեց իր սրտի խօսքը եւ հայրական աղօթքով օրհնեց ներկաները: Սրբազանը բարձր գնահատեց նուիրեալ ՀՕՄ-ուհիներու զոհաբերութեան ոգին, միշտ պատրաստ օժանդակութեան ձեռք երկարելու եւ ծառայելու հոն ուր որ հարկաւոր է:

Ընկի. Եաղճեան հակիրճ ներկայացուց տօնավաճառի կնքամայր՝ ընկի. Հելէն Թոնիկեանի կենսագրականն ու ՀՕՄ-ի մէջ 40 տարիներէ ի վեր իր տարած մարդասիրական աշխատանքը, ապա զայն հրաւիրեց ժապաւենի հատումին:

Տօնավաճառը կ'ընդգրկէր զանազան կրպակներ, ինչպէս՝ խոհանոցի սպասներ, հագուստեղէն, կաղանդի զարդարանքներ, կանացի զարդեղէններ, հայկական ձեռագործներ, Հայաստանեան արտադրութիւններ, մրգեղէններ եւ զանազան տեսակի համեղ ճաշեր ու անուշեղէններ՝ պատրաստուած անդամներու եւ համակիրներու կողմէ:

Տօնավաճառը իր աւարտին հասաւ վիճակահանութեան տոմսերու նուէրներուն բաշխումով: Ինչպէս սովորոյթ է, երկօրեայ սոյն տօնավաճառի հասոյթը ամբողջովին պիտի յատկացուի Մոնթրեալի Ս. Յակոբ Ազգ. վարժարանին, որու համար բոլորին ճիգերը ի սպաս դրուեցան յաջողցնելու այս սրբազան նպատակը:

ARS Montreal «Sosse» Chapter's Annual Bazaar

This year, once again, the Armenian Relief Society Montreal "Sosse" chapter was able to hold its traditional annual bazaar, on November 13-14, 2021 at the Homenetmen Gamk "Haig Markarian" gymnasium at the Montreal Community Center.

- The official opening ceremony took place on the morning of Saturday, November 13, with the ARS anthem. Amongst the guests present at the opening, were His Grace Archbishop Souren Kataroyan, Father Karnig Koyounian, ARS Central Executive Board's Canada representative ungerouhi Arminée Karabetian, ARS Canada Regional Executive Board's chairperson ungerouhi Ani Ohanian and members, chairperson of ARS Laval "Shushi" chapter ungerouhi Flora Guiragossian as well as representatives of sister organizations, members, volunteers and friends. We also had the pleasure to have amongst us Marwah Rizqy, Member for Saint-laurent Quebec Liberal Party and ungerouhi Mary Deros, City Councilor Ensemble Montreal.
- In her opening remarks, ARS Montreal "Sosse" chapter's chairperson ungerouhi Tamar Yaghejian, welcomed the guests, participants and volunteers. She thanked the members of the bazar committee and the members of the social committee for their perseverance, cooperation and solidarity, which contributed to the success of the bazaar. She also thanked all the donors, sponsors and volunteers who have supported the organization's mission throughout many years and continue to stand by the organization under the current situation. Ungerouhi Yaghejian noted the contribution of younger members who worked alongside experienced members and learned from their knowledge and skills during this tremendous task.

Then, His Grace Archbishop Souren Kataroyan conveyed his heartfelt words and blessed those present with a fatherly prayer. The bishop praised the devotion and sacrifice of dedicated ARS members, always ready to lend a helping hand and serve communities in need.

Ungerouhi Yaghjian presented a brief biography of the bazar's godmother, ungerouhi Helen Tonikian, and congratulated her for her 40 years of service within the organization through her active participation within the social activities committee.

The 2021 bazaar offered a variety of homemade goods, Christmas decorations, Armenian handmade items and gifts. As every year, our volunteers and members contributed towards the preparation of traditional Armenian meals such as mante, sarma, boereg, tetoumi anoush and a variety of homemade desserts.